

## Տ. ԳԵՂԱՐԴ ԱԲԵՂԱ ՎԱՆՈՒՆԻ

(ավազանի անունը՝ Վահե)

Ծնվել է 1976 թ. ապրիլի 5-ին Երևան քաղաքում:

1983-1993 թթ. սովորել է տեղի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում:

1993-1998 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1998-1999 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Զ լսարանում:

1999 թ. մայիսի 23-ին, ձեռամբ Տ. Ռուսկան եպս. Գալփաքյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. հոկտեմբերի 10-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Պետրոս արքեպս. Բերդումեան-Աղամալեան Նախիջեւանցու «Կշիռ արդարութեան»» թեմայով, և արժանացել «լավ» գնահատականի: 2001 թ. հուլիսի 28-ին, ձեռամբ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: